



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի առաջին եռամսյակում (վերլուծություն)

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 44931 գործարք, որոնց քանակը 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 15.3 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 10.1 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11270 օտարման գործարքների 75.1 %-ը կազմել է առուվաճառքը, 24.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.2 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 40.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի առաջին եռամսյակում, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 16.7 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 3.7 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.6 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի առաջին եռամսյակում, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.2 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 23.2 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Առաջին եռամսյակ 2013 թ.	Առաջին եռամսյակ 2014 թ.	Չորրորդ եռամսյակ 2013 թ.
Կենտրոն	424100	428000	428000
Արաբկիր	351900	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	280200	282700	282600
Նոր Նորք	245400	252100	251900
Ավան	255600	260100	260000
Էրեբունի	245300	250600	250000
Շենգավիթ	250900	256100	255600
Դավթաշեն	270300	275150	275000
Աջափնյակ	242700	249400	248900
Մալաթիա-Սեբաստիա	235900	242000	241900
Նուբարաշեն	146400	154850	153900
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	268100	273400	273100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 0.1 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1115 բնակարան, որի քանակը, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 15.9 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 6.0 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Առաջին եռամսյակ 2013 թ.	Առաջին եռամսյակ 2014 թ.	Չորրորդ եռամսյակ 2013 թ.
Արագածոտն	Աշտարակ	114300	115400	115000
	Ապարան	54400	57300	57100
	Թալին	62400	65100	64900
Արարատ	Արտաշատ	94500	95400	95000
	Մասիս	112800	115000	115000
	Վեդի	98500	100100	99900
	Արարատ	75100	75300	75200
Արմավիր	Վաղարշապատ	153600	154150	154150
	Արմավիր	120100	121200	121200
	Մեծամոր	86800	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99100	99200	99150
	Գավառ	58700	59800	59800
	Մարտունի	107500	107650	107600
	Վարդենիս	42500	44800	44700
	Ճամբարակ	26700	28700	28700
Լոռի	Վանաձոր	87800	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	54600	55000	55000
	Տաշիր	44700	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19800	20200	20200
Կոտայք	Աբովյան	153500	155100	155100
	Նոր Հաճն	128500	128600	128600
	Բյուրեղավան	107400	108150	108150
	Եղվարդ	109300	109300	109300
	Հրազդան	62900	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	84800	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109300	109300
	Արթիկ	66300	66600	66500
	Մարալիկ	40100	40700	40600
Սյունիք	Գորիս	118100	121900	121700
	Կապան	90900	92300	92200
	Սիսիան	89400	91150	91150
	Մեղրի	77100	80800	80700
	Ագարակ	44800	46900	46850
	Քաջարան	94300	94650	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	92700	95000	95000
	Եղեգնաձոր	119800	124900	124800
	Ջերմուկ	110700	112600	112500
Տավուշ	Դիլիջան	109700	113150	113150
	Իջևան	117100	118300	118300
	Բերդ	58100	60200	60200
	Նոյեմբերյան	46700	49900	49900
	Այրում	29400	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2014 թվականի առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 0.1 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 1188 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 291 գործարք, մարզերում՝ 897 գործարք: 2014 թվականի առաջին եռամսյակում, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 15.9 %-ով, ընդ որում, Երևանում՝ 22.0 %-ով, մարզերում՝ 13.8 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.4 %-ով, ընդ որում, Երևանում նվազել է 1.0 %-ով, իսկ մարզերում՝ աճել 10.5 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Առաջին եռամսյակ 2013 թ.	Առաջին եռամսյակ 2014 թ.	Չորրորդ եռամսյակ 2013 թ.
Կենտրոն	472700	476100	476100
Արաբկիր	379700	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	292300	295000	295000
Նորք-Մարաշ	316000	319200	319200
Ավան	268300	270500	270500
Էրեբունի	236000	239500	239500
Շենգավիթ	252500	255000	255000
Դավթաշեն	273400	276000	276000
Աջափնյակ	246700	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	235700	238000	238000
Նուբարաշեն	148400	150500	150500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	283800	286600	286600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի առաջին եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Առաջին եռամսյակ 2013 թ.	Առաջին եռամսյակ 2014 թ.	Չորրորդ եռամսյակ 2013 թ.
Արագածոտն	Աշտարակ	135600	136200	136200
	Ապարան	59100	60050	60050
	Թալին	68600	69250	69250
Արարատ	Արտաշատ	99100	100000	100000
	Մասիս	114400	115100	115100
	Վեդի	101400	102300	102300
	Արարատ	87900	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	152600	153100	153100
	Արմավիր	106700	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94400	94800	94800
	Գավառ	57000	57100	57100
	Մարտունի	95200	96100	96100
	Վարդենիս	39500	41000	41000
	Ճամբարակ	29900	31100	31100
Լոռի	Վանաձոր	99400	100000	100000
	Ստեփանավան	89100	90000	90000
	Սպիտակ	113700	114000	114000
	Ալավերդի	48300	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13500	14000	14000
	Ախթալա	29700	30000	30000
Կոտայք	Աբովյան	155100	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120200	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82400	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	82700	83000	83000
Շիրակ	Գյումրի	118200	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	51800	52000	52000
Սյունիք	Գորիս	129400	130000	130000
	Կապան	99100	100000	100000
	Սիսիան	94100	96500	96500
	Մեղրի	83200	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11610
Վայոց ձոր	Վայք	89000	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Զերմուկ	129800	131300	131300
Տավուշ	Դիլիջան	111100	113000	113000
	Իջևան	122000	123200	123200
	Բերդ	59000	60100	60100
	Նոյեմբերյան	46900	48300	48300
	Այրում	34800	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ

Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել է 3447 միավոր (1438.50 հա) հող, որից Երևանում՝ 384 միավոր (22.73 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1784 միավոր (1266.76 հա), որից Երևանում՝ 12 միավոր (1.22 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1073 միավոր (96.71 հա), որից Երևանում՝ 177 միավոր (6.78 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 402 միավոր (30.34 հա), որից Երևանում՝ 172 միավոր (12.14 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 50 միավոր (18.81 հա), որից Երևանում՝ 23 միավոր (2.59 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 11 միավոր (22.40 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 127 միավոր (3.47 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականի առաջին եռամսյակում օտարված հողերից 2764 միավորի (1202.01 հա) նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 323 միավոր (19.42 հա), նվիրատվության գործարքներ՝ 665 միավոր (225.67 հա), որից Երևանում՝ 52 միավոր (2.84 հա) և փոխանակության գործարքներ՝ 18 միավոր (10.82 հա), որից Երևանում՝ 9 միավոր (0.47 հա):

Հանրապետությունում 2014 թվականի առաջին եռամսյակում 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.9 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 14.6 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 9.2 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 31.4 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 292.98 հա, որից 279.97 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.5 %-ը կամ 621 միավորը (118.88 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 155 միավոր (4.34 հա), իսկ 76.7 %-ը կամ 2120 միավորը (1068.23 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 165 միավոր (14.57 հա): 2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 23 գործարք (14.90 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2014 թվականի առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատման (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատման հողեր						բնակելի կառուցապատման (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատման հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	12	1.15	64	0.92	79	2.27	9	0.71	8	1.12	81	4.38	67	8.36
Արագածոտն	20	19.64	3	0.34	1	0.004	16	0.55	122	106.35	0	0.00	39	5.44	8	0.43
Արարատ	25	8.22	0	0.00	16	0.79	7	0.03	290	140.66	5	9.07	118	10.91	15	0.28
Արմավիր	9	6.17	0	0.00	2	0.27	5	0.04	245	273.80	1	0.03	133	12.62	5	0.04
Գեղարքունիք	6	4.83	1	1.96	13	0.62	27	0.98	31	26.41	0	0.00	72	9.74	2	0.12
Լոռի	3	1.75	2	0.27	17	0.24	20	1.00	139	122.95	1	0.50	28	2.32	8	0.12
Կոտայք	16	31.63	1	0.14	33	2.09	16	0.36	205	114.22	1	0.40	117	9.22	26	2.05
Շիրակ	2	1.00	1	0.39	15	0.16	1	0.01	114	120.93	1	1.59	42	5.22	7	0.25
Սյունիք	6	6.03	5	0.27	4	0.38	4	0.75	23	25.39	0	0.00	8	0.68	4	0.06
Վայոց ձոր	11	14.85	0	0.00	4	0.20	4	0.06	29	15.58	0	0.00	14	1.04	3	1.32
Տավուշ	3	1.82	0	0.00	13	0.65	15	2.76	43	13.68	4	1.21	27	5.36	12	5.44
Ընդամենը	101	95.94	25	4.52	182	6.32	194	8.81	1250	960.68	21	13.92	679	66.93	157	18.47

Ստորև ներկայացվում է 2014 թվականի առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	131	2.85	11	0.36	64	0.92	56	1.57	24	1.50	0	0.00	1	0.80	0	0.00	23	0.70
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	35	8.24	15	7.35	3	0.34	1	0.004	16	0.55
Արարատ	5	0.02	0	0.00	0	0.00	5	0.02	43	9.02	25	8.22	0	0.00	16	0.79	2	0.01
Արմավիր	2	0.003	0	0.00	0	0.00	2	0.003	13	5.75	8	5.44	0	0.00	2	0.27	3	0.04
Գեղարքունիք	2	0.03	0	0.00	1	0.02	1	0.01	44	7.02	5	3.48	1	1.96	12	0.60	26	0.98
Լոռի	7	0.19	0	0.00	5	0.12	2	0.07	34	2.79	2	1.47	2	0.27	12	0.12	18	0.93
Կոտայք	9	0.67	0	0.00	9	0.67	0	0.00	53	29.85	12	27.94	1	0.14	24	1.41	16	0.36
Շիրակ	8	0.06	0	0.00	8	0.06	0	0.00	11	1.495	2	1.00	1	0.39	7	0.10	1	0.005
Սյունիք	3	0.31	1	0.12	2	0.19	0	0.00	16	7.12	6	6.03	4	0.15	2	0.19	4	0.75
Վայոց ձոր	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	18	15.10	11	14.85	0	0.00	3	0.19	4	0.06
Տավուշ	4	0.25	0	0.00	4	0.25	0	0.00	27	4.98	3	1.82	0	0.00	9	0.40	15	2.76
Ընդամենը	172	4.39	12	0.48	94	2.24	66	1.67	318	92.87	89	77.60	13	4.05	88	4.07	128	7.15

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 12 գործարք (18.34 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի առաջին եռամսյակում, 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 26.9 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 51.0 %-ով, իսկ մարզերում՝ 23.9 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 28.8 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 43.6 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 3.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 13.3 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2014 թվականի առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	14	7.24	36.8	2517.5	308.0	85	35.54	365.0	12000.0	3497.5
Ապարան	1	0.11	2065.9	2065.9	2065.9	3	0.54	86.5	2727.3	711.7
Թալին						15	35.96	93.6	5494.5	703.3
Ծաղկահովիտ						13	25.94	79.5	1000.0	298.3
Արարատի մարզ										
Արտաշատ	15	2.30	1191.2	9841.6	5339.6	104	30.37	335.1	10833.3	2631.4
Մասիս	5	0.74	160.0	4154.9	1746.4	40	24.53	200.0	11904.8	2959.2
Վեդի	5	5.18	69.0	470.0	280.6	143	84.73	207.0	10795.1	1836.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	2.55	84.0	1065.4	573.0	125	76.69	294.3	9090.0	1228.5
Բաղրամյան						35	71.77	90.6	2561.1	793.8
Վաղարշապատ	2	2.90	191.6	191.6	191.6	71	38.88	444.4	11764.7	2146.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.67	660.7	660.7	660.7	2	0.18	199.8	1875.0	430.0
Ճամբարակ								60.5	953.3	355.2
Մարտունի	1	0.12	128.3	128.3	128.3	13	5.82	51.1	2850.0	750.8
Սևան						3	0.30	52.2	2134.8	328.5
Վարդենիս	3	2.70	60.5	407.2	263.3	13	20.11	41.2	2575.1	407.3
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.49	1244.4	1244.4	1244.4	11	5.54	170.4	6424.2	572.2
Գուգարք						51	37.40	234.6	6065.9	799.0
Սպիտակ	1	0.98	405.2	405.2	405.2	21	6.15	250.0	5555.5	723.6
Ստեփանավան						19	18.99	90.6	1686.6	348.4
Տաշիր						35	52.25	45.3	1384.4	173.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	10	24.16	120.7	2565.9	1109.0	87	25.48	279.3	11942.7	3991.5
Եղվարդ	1	0.78	240.8	240.8	240.8	83	73.62	174.4	11971.8	2386.7
Հրազդան	1	3.00	635.8	635.8	635.8	32	13.74	130.5	10256.4	1410.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	1.00	293.8	295.0	294.4	40	37.48	252.0	1693.1	641.2
Ամասիա						1	8.50	40.9	261.0	126.9
Անի						44	54.21	110.6	546.9	412.2

Աշոցք						13	9.32	58.5	215.8	132.1
Արթիկ						16	11.43	79.4	1428.6	443.0
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.66	263.6	263.6	263.6	2	3.17	92.6	1023.2	741.0
Կապան	3	2.84	76.9	1298.8	669.4	1	1.06	120.0	841.6	374.8
Մեղրի	2	2.53	77.0	77.0	77.0	5	0.93	193.0	3000.0	741.7
Սիսիան						15	20.22	46.3	1977.4	550.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	12.85	65.6	382.3	216.7	17	12.87	125.0	10000.0	1943.3
Վայք	6	2.00	8505.0	8506.3	8505.4	9	1.87	58.8	1430.7	649.7
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.19	213.3	3783.8	690.0
Իջևան						23	5.08	267.5	9454.5	1265.5
Նոյեմբերյան	3	1.82	162.9	1518.7	614.9	19	8.40	46.7	7368.4	922.7

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	40.0	6150.0	6150.0	6150.0	31	35179.0	130.7	22200.0	2582.4
Ապարան						1	1040.0	124.1	609.6	390.0
Թային						4	6410.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						2	11220.0	60.0	214.3	92.3
Արարատի մարզ										
Արտաշատ	6	7355.2	166.9	948.8	541.8	32	40230.9	173.9	7140.3	900.2
Մասիս	9	573.0	850.9	6001.2	3408.6	56	37797.9	187.5	25000.0	1206.1
Վեդի	1	20.0	2000.0	2000.0	2000.0	29	30286.0	126.1	5000.0	661.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						52	51366.0	131.6	9090.9	1213.5
Բաղրամյան						7	7629.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	2734.7	157.4	294.0	225.7	71	63982.0	197.4	26528.4	1529.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	990.2	110.0	190.2	150.1	18	20571.7	186.6	1084.3	683.6
Ճամբարակ						1	113.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	7	3810.7	112.6	330.0	208.3	43	58385.6	119.3	5000.0	282.8
Սևան	1	188.9	372.8	372.8	372.8	6	7468.3	240.0	3110.4	323.3
Վարդենիս	2	983.7	66.6	770.0	418.0	3	7716.8	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի	5	345.8	1650.0	1666.5	1652.1	4	2660.0	114.3	1388.9	217.0
Գուգարք	5	157.4	2202.8	2298.0	2279.2	15	10815.0	77.9	14083.3	1260.0
Սպիտակ	2	740.7	774.9	832.3	803.6	5	5371.5	104.9	1348.3	205.9
Ստեփանավան						2	1320.0	88.2	1666.7	175.5
Տաշիր						1	1760.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	8	3218.1	621.1	5426.6	2798.6	56	43322.5	264.5	35353.5	1987.1

Եղվարդ	16	10910.2	534.6	3257.5	1947.8	55	42860.6	173.6	27000.0	2860.9
Հրազդան						5	5023.0	117.7	34848.5	1319.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	880.3	1980.0	6781.5	3560.0	17	17703.0	113.6	18750.0	333.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						3	5550.0	67.9	180.6	181.7
Աշոցք						1	2400.0	40.8	144.0	64.7
Արթիկ	3	78.0	2208.3	4333.3	3097.2	21	26589.7	111.8	5000.0	217.8
Սյունիքի մարզ										
Գորիս	1	778.0	425.3	425.3	425.3	1	1544.0	112.2	1700.0	365.0
Կապան	1	1103.5	103.7	103.7	103.7	3	1143.1	67.9	2638.9	310.2
Մեղրի						2	1954.0	68.5	632.9	221.7
Սիսիան						2	2130.0	123.5	875.0	220.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						11	8578.1	96.7	7659.6	507.6
Վայք	3	1905.8	850.5	853.4	852.2	3	1805.5	120.7	1448.3	235.2
Տավուշի մարզ										
Բերդ						1	1869.0	75.8	810.0	121.5
Իջևան	6	3923.2	160.0	3000.0	1569.8	23	48603.3	74.1	14423.1	519.8
Նոյեմբերյան	3	61.4	5500.0	5510.2	5505.1	3	3090.0	125.0	1948.1	230.0

2014 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2099 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.7 %-ը:

2014 թվականի առաջին եռամսյակում, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 5.2 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 1.4 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 132 բնակարանի, 214 անհատական բնակելի տան, 871 հասարակական նշանակության, 242 արտադրական նշանակության օբյեկտի, 602 միավոր (3153.75 հա) հողի, 2 այգետնակի և 36 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 15 վարձակալության գործարքների քանակը, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 60.5 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 80.5 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 3153.75 հա հողերից 2.20 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3151.55 հա հողերից 1313.71 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 1396.41 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 2199.83 հա, որից 471.11 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5480 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.2 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 24.9 %-ով, իսկ 2013 թվականի առաջին

եռամսյակի համեմատ՝ աճել 22.3 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (53.2 %), անհատական բնակելի տների (24.4 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.6 %) և հողերի (6.5 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2951 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 24.4 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 20.5%-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 427.44 հա հող, որից 28.76 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 81.3 %-ը կամ 28.76 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 176.81 հա, որից 175.93 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 387 գործարք, որից 263-ը՝ Երևանում: 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 27.5 %-ով, ընդ որում Երևանում՝ 26.5 %-ով, մարզերում՝ 29.5 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել է 17.3 %-ով, ընդ որում Երևանում՝ 20.6 %-ով, մարզերում՝ 10.7 %-ով:

2014 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 4798 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 19.4 %-ով, իսկ 2013 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 4.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.7 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (26.1 %):

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե